572. Եկեղեցու արևելյան լուսամուտի վերևի քարին, 3 տող.

ՍԲ ԽԱՉՍ
ԲԱՐԷԽԱՒ
Ս Է Ճ ԱՐՈՒՏԻՆ:

Ծանոթ. Գրված է մանր ու գլխագիր տառերի խառնուրդով: Ճ ԱՐՈՒՏԻՆ պետք է վերծանել ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՐՈՒՏԻՆ (Հարություն): Հոգևոր այս կառույցները ճարտարապետական ու շինարարական հատկանիշներով նման են Նախատակի վանքին:

573. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Եկեղեցու բակում, 2 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԴԱՐԲԻԵՆ՝ ՈՐԴԻ ԱԲԱՍԻՆ:
ԹՎԻՆ ՌՃԻԸ (1679):

Ծանոթ. Շրջապատի գերեզմանոցի մի քանի տապանաքարեր ևս ունեն հայերեն ու վրացերեն արձանագրություններ:

ԱՔՈՐԻ

Գուգարքի հինավուրց գյուղերից է, գտնվում է Ալավերդի քաղաքից 3կմ արևմուտք, բարձրադիր դարավանդի վրա:

Գյուղի առանձին տեղերում և շրջակայքում, հատկապես Երգնքալա, Գութանքալա, Կալեր, Չարդախլու, Գեղատեղ, Սարի Գեղատեղ, Դարք գյուղատեղիներում հանդիպում են եկեղեցիների, մատուռների ավերակներ, խաչքարեր ու տապանաքարեր:

Գյուղի կենտրոնում մնում է XII-XIII դդ. երկթեք լանջերով, կղմինդրածածկ Ս. Գևորգ եկեղեցին, որին XIX դ. արևմուտքից հավելվել է մի դահլիճ՝ նույնպես դրսից սրբատաշ բազալտով, ներքուստ՝ կոպտամշակ քարով շարված: Եկեղեցու շրջապատի գերեզմանոցի տապանաքարերից մեկն ունի ՌՄԾԶ (1807 թ.) հիշատակագրություն: Գյուղի «Զույգ խաչքարերի» հատվածում կան մի այլ եկեղեցու հետքեր:

Գյուղից արևելք Ագեղցի բնակատեղին ու ավերված եկեղեցին են՝ շրջապատված ընդարձակ գերեզմանոցով: Աղոթարանն ունի հույժ հնության հատկանիշներ (անսովոր՝ մոտ 2 մ թանձրությամբ պատեր, ուղղանկյուն խորան): Գյուղից հարավ, լեռնակրծքում, Բաղրամյան ավանի հանդիման, քարանձավային համալիր է՝ ամրացված արտաքին պատերով:

Առավել նշանավոր հուշարձանը գտնվում է գյուղի հյուսիս-արևելքում, Դարք գյուղատեղիում, որը լքվել է երկրորդ աշխարհամարտից հետո: Հավանաբար բարձր ու անհարթ դիրքի շնորհիվ է բնակավայրը Դարք կոչվել: Սանահնի «Քոթուկում» պահպանվող Զաքարյանների հրովարտակով մի շարք վայրերի հետ *անդառնալի հրամանով* այս Դարք գյուղը ևս նվիրվել է վանքին՝ *ամենայն խարճէ ազատ*, որը տեղի է ունեցել վանահայր Գրիգոր Աբասորդու ժամանակ, թերևս 1220-ական թվականներով: Հայտնի է Բգավոր վանք անունով: Շուրջը կացարանների (բագեր, փոսորակներ) ավերակներ կան: Գ. Շախկյանի կարծիքով, հուշարձանի անունը այդ բագերի առկայության հետևանք է:[52] եկեղեցին եռանավ, թաղածածկ շինություն է՝ կառուցված շինարարական փայլուն արվեստով: Դժբախտաբար, մեծապես տուժել է հատկապես 1988 թ. երկրաշարժից: Այս և Բգավանքի մյուս շինությունները, ցավոք, ոչ վիմական արձանագրություններ ունեն, ոչ էլ հիշատակվել են մատենագիրների մոտ, բայց կան մի քանի հիշատակագրված կորողներ, որոնցից հնագույնները 1233, վերջինը՝ 1735 թվականի են:

[52] *Գ. Շախկյան*, Լոռի, 57:

574. ԽԱՉՔԱՐ՝ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ. մեծ և պարզ, կանգնած է ճարտարապետորեն ձևավորված քառաստիճան բարձր պատվանդանի վրա. գյուղից 4 կմ հյուսիս, «Դարքախեչ» կոչվող բարձր բլրի գագաթին, քիվին՝ 1, թիկունքին՝ 11 տող.



ՄԲ ՍԱՐԳԻՍ:
Ի ԹՈՒԻ[Ն] :ՈՉԲ: (1233), ԵՍ՝ ՀԻ-
ԻՍՆ ՔՈԹԻԹ, ԵՂԲԱՐԲ ԵՒ
ԾՆՈՂԱՒՔ ԾԱՌԱՅՔ
Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԾԻՍ ՍԱՆԱՀՆԻՆ ԵՒ Վ-
ԱՐԴԱՊԵՏԻՆ, ՈՐԴՈ ՏՈՒՏԱ,
ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ
ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՍԱՆԱՀ-
ՆԻՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ-
ԻՆ: ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ՝ Յ-
ԻՇԵՑԵՔ ԶՄԵԶ ԵՒ
ԶԾՆՈՂՍՆ ՄԵՐ Ի ՔՍ:

Հրատ. Շահինյան, ՀՄԿՀ, 62:

Ծանոթ. Հիւսն Քոթիթի վերաբերյալ տեղեկություններ չկան: Արձանագրությունից երևում է, որ ինքը՝ Հիւսն ու իր հարազատները եղել են ***ծառայք Աստուածածնի Սանահնին եւ Վարդապետին՝ որդո Տուտա:*** Ա. Շահինյանը, Գրիգոր Տուտեորդուն նույնացնելով Գրիգոր Աբասորդուն, եզրակացրել է, թե 1208 թ. Լոռիի ժողովից առաջ մահացած Տուտեորդին դեռևս կենդանի էր 1233-ին՝ անտեսելով ինչպես Կ. Ղաֆադարյանի ծանրակշիռ փաստերները (Սանահին, 51-54), այնպես էլ Կիրակոս Գանձակեցու վստահ հաղորդումը (Պատմություն Հայոց, 171): Ուշադիր քննելով արձանագրությունը, նույնպես պետք է հանգել այն կարծիքին, որ ***Սանահնի սբ Աստվածածնի և Վարդապետի՝ որդու Տուտա*** ծառաները խաչքարը կանգնեցրել են ***յառաջնորդութեան Սանահնին Գրիգոր վարդապետին,*** որը «Պատճառաց գրքի» հեղինակն է և մահացել է 1234 թվին:

575. ԽԱՉՔԱՐ. Ս. Սարգիս կայծակնահար կոթողի մոտ, ծաղկախաչից վեր, անշուք տառերով՝ հարավային կողին, 6 տող.



ԽԱՉՍ ԱՆԿԱՐ
Ի ԴՍՏԵՐՆ Է, ԿՈՂԻ
ԿԻՑ
ՍՈՒԼ
ԹԱՆԻ:
ԽԱՉ[ԻԿ]:

Ծանոթ. Հավանականն ժամանակը XIII դ. է: Խաչիկը, ամենայն հավանականությամբ, քարգործ վարպետն է: Խաչքարն անմշակ ժայռաբեկոր է, որի վրայի գծախաչի գծերն ավարտվում են փոքր շրջանակներով:

Ս. Սաղումյանի աչքից վրիպել է, որ պրակի կազմողներն այս արձանագրությունը ներկայացրել են մի քանի բնագիր հետո, հետևյալ վերծանությամբ. ԽԱՉՍ Վ[Ա]ԽՆ ԿԱՐԱՊԵՏ I Ի ԴՍՏԵՐՆ ԵՒ ԿՈՂԱԿԻՑ I ՍՈՒԼԹԱՆԻ: Վերջին տողի ԽԱՉ տառախումբը լուսանկարում չի նշմարվում (Խմբ.):

576. ***ԽԱՉՔԱՐ*** պատվանդանի վրա, գտնվում է գյուղից արևելք, «Լագի ձոր» կոչվող վայրում, բլրի գլխին, կիսավեր մատուռի մեջ, զույգ կաղնիների տակ, քիվին՝ 1, հարավային կողին՝ 10, թևերի շուրջը՝ 3 տող.



Ի ԹՎ[ԻՍ] :ՈՁԲ: (1233), ԵՍ՝ ԴԱՎԻԹ, ԿԱՆԳ-
ՆԵՑԻ
ԶՍ̅Բ ԽԱ-
ՉՍ: Ո-
ՐՔ ԵՐ-
ԿՐՊ-
ԱԳԱՆ-
ԵՔ՝ ՅԱՂ-
ԱԻԹՍ ՅԻՇ
ԵՑԵՔ:

ԽԱՉՍ ՍՊԱՆ-
ՏԵՐԱ-
Յ Է:

Ծանոթ. Վերջին երեք տողերի տառաշարքը թեև պարզ կարդացվում է, սակայն կա երկմտանք, թե արդյոք *սպանդարանը* չի միտվում իբրև զոհարան և առնչվում Տիրոջ տանջամահության գործիքին (խաչին): Սակայն, ինքնին պարզ է, որ ***Սպանտերան*** (=Սպանդար) կարող է միայն վարպետը լինել:

Ի դեպ, նկատենք, որ արմատացած կաղնեպաշտության դեմ պայքարի միջոց ընտրվել է այդ աներեր ծառերի տակ խաչքարեր կանգնեցնելը, որպիսի օրինակները շատ են Հյուսիսային Հայաստանում, Արցախում:

577. ***ԽԱՉՔԱՐ*** պատվանդանի վրա, գյուղի արևմտյան մասում, աղբյուրի մոտ (Գալստյան Մելսակի բակում): Պատվանդանի հյուսիսային երեսին, 7 տող.



ԿԱՍԱՒՆ Ա̅Յ ԵՍ՝ ԱՂԵԿԱՃ-
ՈՐՏ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՀԱԵ-
Թ, Ի ՆԵՂ ԱՒՈՒՐՔ ՇԻՆԵՑԱՔ
ԶԺԱՄԱՏՈՒՆՍ ԵՒ ԶԽՈՐԱՆՍ,
ԵՒ ԶԽԱՉՍ, ԵՒ ԱՌԱՔ :Ա: (1) ԺԱՄ
ԶՎԱՐԴԱՒԱՐԻՆ ԿԻՐԱԿԷՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՄԵ-
Ր ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է: ⌊ԹՎԻՆ⌋ ՉԺԱ (1262):

Հրատ. Շահինյան, ՀՄԿՀ, 52:

Ծանոթ. Խաչքարի մոտ այժմ հին շենքի մնացորդներ չկան: Այն կանգնեցվել է շինությունների իրականացնելու կապակցությամբ: Ըստ արձանագրի, Աղեկաճորտն ու իր կին Հայեթը կառուցել են ժամատուն և խորան: Ժամատունը, անշուշտ, այս դեպքում գավիթը չէ, այն կարող է հյուրանոց կամ ննջեցյալների հոգեհանգստի տուն լինել: Առանց հավելյալ բնորոշման, դժվար է ճշտել, թե խորանի տակ ինչ է նկատի ունեցել: Ընդհանուր ըմբռնմամբ, խորանը կարող է լինել ավանդատուն, եկեղեցու առանձնամաս, գավթի մաս, պատարագի սեղան. այս դեպքում, թերևս, նկատի է առնվել պարզապես գերեզմանը: Հինգերորդ տողում *առաք*՝ ստացանք իմաստն ունի: Ա. Շահինյանը առաջին անձնանունը բառանջատել է՝ ԱՂԵԿԱ ՃՈՐՏ:

578. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղամիջում, պատվանդան ունեցող մի խաչքարի մոտ, որ կիսովին կոտրված է, 2 տող.



ԹՎԻՆ] :ՌԾ: (1601):

579. ԽԱՉՔԱՐ. ագուցված, գյուղամիջի եկեղեցու հյուսիսային պատին, 2 տող.



ՍԲ ԽԱՉՅՍ ԲԱՐՅԷԽԱՒՅՍ ՎԱՅՐԱՆԱ ԷԻ..
ԹՎԻՆ] :ՌՇԷ: (1608):

580. ՏԱՊԱՆԱՔԱՐ. գյուղամիջի եկեղեցու մոտ, 3 տող.

ԱՆԹԱՌ-
ԱՆ, ԹՎԻՆ
:ՌՃՁԴ: (1735):

581. Գյուղամիջի եկեղեցու մոտ, ժայռաբեկորի վրա խաչ և 5 տող.



ԽԱՉՍ ՎԱՅՍՆ ԿԱՐԱՊԵՏ-
Ի ԴՍՏԵՐՆ ԵԻ ԿՈՂԻ-
ԿԻՑ
ՍՈՒԼ-
ԹԱՆԻ:

Ծանոթ. N 575-ի խաչքարն է (խմբ.):

582. ԽԱՉՔԱՐ. գյուղի արևելակողմում, բազիլիկի (Ագեղցի եկեղեցու) մոտ, քիվին և թիկունքին, 6 տող.

Ի ԹՎԱԿԱՆԻՍ :ՉԾԲ: (1303),
ԵՍ՝ ԽԱՄՐԻԿՍ, ԿԱՆԿ-
ԵՑԻ ՍԲ ՆՇԱՆՍ
Ի ՎԵՐԱ ՊԱՏՎՈՒԱԿ-
ԱՆ ՔԱՀԱՆԱԻՍ՝ ԿԱՐ
ԱՊԵՏԻՍ

583. ԽԱՉՔԱՐ. եկեղեցու մեջ, քիվին 2 տող.



ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԻ ՍԱՐԳՍԻ ԵԻ ՄԱՐԵՄԱՅ:
ԼԹՈՒԻՆ] ՉԻ (1271):

584. ԽԱՉՔԱՐ. եկեղեցու մեջ, նախորդի մոտ, քիվին և մակերեսին, 4 տող.



ՔԱ ԱՇ ՈՂՈՐՄԻ ԱԼԷՔՍԻՈ-
ՍԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ՇՆՈՂԱՑ
ՈՑ; ԱՄԷՆ;
ԹՎԻՍ ՉԻ (1271):

Ծանոթ. Երրորդ տողի ՈՑ-ն մնում է անհասկանալի:
Երրորդ տողի սկզբում, թերևս պետք է կարդալ [ԻՐ]ՈՑ (կամբ.):

585. ԽԱՉՔԱՐ. նույն տեղում, պատվանդանի վրա, շրջանակներին և խաչաթևերի արանքում, 12 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԴԱՒԻԹ, Կ-
ԱՆԳՆԵՑԻ [Խ]ԱՅՉՍ ՀԱՒՐՆ ԻՄՈՑ
ՈՎ
ԱՆԻ
ՍԻ:
ՅԱ
ԴԱՒ
ԹՍ
ՅԻ
ՇԵ
ՍՉ
ԻՔ:

586. ԽԱՉՔԱՐ. գյուղի Ս. Գրիգոր եկեղեցու պատի մեջ, ներքին եզրում, 3 տող (ԺԴ դ.)



ԵՍ՝ ՋԱՆԱՉԻՉՍ,
ԽԱՉՍ ՇԻՆԵԼ ԷՏՈՒ Ի
ՅԻՇԱՏԱԿԻՆՉԵԿ ԻՆՉ ԵՒ Կ[ԷՆՈՉ ԻՄ]:

ՀԱԳՎԻ

587. ԽԱՉՔԱՐ. գյուղի մեջ, տան բակում, երկաստիճան պատվանդանի վրա, ջարդած, քիվին, 2 տող.

[ԿԱՆԳ]ՆԵՑԱՒ
ԽԱ[Չ]Ն. [ԹՎԻՆ] ՉԼԶ (1287):